ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ք. Երևան 26 Հունվարի 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին գնումների գործընթացում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

Գնման ընթացակարգի ծածկագիր՝ **«ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/04»**

Մասնակից՝ **«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ**

(ՀՎՀՀ՝ 00522502, գործունեության հասցե՝ ք. Երևան, Երկաթուղայիններ 4փ 2/6)

ՀՀ պետական վերահսկողական ծառայության կարիքների համար վարչական սարքավորումների ձեռքբերման նպատակով 2023 թվականի դեկտեմբերի 25-ին հրապարակվել է «ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցներից «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Մասնակից) էլեկտրոնային աճուրդի արդյունքում թիվ 1 չափաբաժնի մասով առաջին տեղ է զբաղեցրել: Հայտերի գնահատման փուլում գնահատող հանձնաժողովի կողմից պարզվել է, որ նրա կողմից ներկայացված հայտում առկա են հրավերի պահանջների նկատմամբ որոշակի անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Հավելված 1-ում (Դիմում-հայտարարություն) ոչ ճիշտ են նշված եղել գնման ընթացակարգի ծածկագիրը (բոլոր տեղերում), Պատվիրատուի անվանումը, չափաբաժինների համարները, կազմակերպության ռուսերեն լեզվով անվանումը, նույն Հավելվածի 1) կետը տարբերվել է Ընթացակարգի հրավերով սահմանված նույն Հավելվածի 1) կետից, բացակայել է փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատող անձի լիազորությունները հավաստող փաստաթուղթը, բացակայել է Հավելված 1.3-ը՝ Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, ինչպես նաև բացակայել է թիվ 1 չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Սույն թվականի հունվարի 11-ին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված կարգի Հավելված N 1-ի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն, գնահատող հանձնաժողովի կողմից որոշվել է կասեցնել հայտերի գնահատման նիստը և Մասնակցին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունները, որոնց վերաբերյալ գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ծանուցել է նրան, սակայն սահմանված ժամկետում նրա կողմից շտկում չի կատարվել:

Հաշվի առնելով Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները, այն է՝ «եթե կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է», և հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.11 կետը, Մասնակցի հայտը գնահատվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ անբավարար և մերժվել է, իսկ թիվ 1 չափաբաժնով գնման ընթացակարգը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, հայտարարվել է չկայացած:

Հաշվի առնելով այն փաստը, որ վերոնշյալ հանգամանքը, Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն, որակվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, որը հանգեցրել է գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ **որոշում եմ** «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Անի Բաղդասարյան

Կատարող՝ Անի Ախոյան
Ստորաբաժանում՝ Գործերի կառավարման և գնումների կազմակերպման բաժին
Հեռ.՝ 010-31-31-82